ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1964 Общественные науки

Հ. Խ. Նազարյան

XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ՌՈՒՍ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

(ըստ ռուսական աղբյուրների)

Ռուս-իրանական հարաբերությունների մասին XVI—XVII դարերում ընդհանրապես, և XVII դարի առաջին կեսին մասնավորապես, մինչև այժմ ոչ մի առանձին ուսումնասիրություն գոյություն չունի։ Այդ հարաբերությունների մասին համառոտ կերպով որոշ տեղեկություններ տրված են ընդհանուր բնույթ կրող պատմական գրականության մեջ։ Մինչդեռ այս թեմայի նշանակությունը կարևոր է ոչ միայն Ռուսաստանի և Իրանի պատմության, այլև նշված ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների լուսաբանման տեսակետից և այդ կապակցությամբ։

Ներկա հաղորդումով մեր առջև խնդիր ենք դրել որոշ չափով լրացնելու այդ պակասը և գոյություն ունեցող աղբյուրների հիման վրա համառոտ կերպով շարադրելու XVII դ. առաջին կեսում ռուս-իրանական հարաբերությունների կարևոր մոմենտները, հավակնություն չունենալով սպառիչ կերպով ուսումնասիրելու և շարադրելու այդ հարաբերություններն ամբողջությամբ։[1]

Ռուսական և Իրանական պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու առաջին փորձը տեղի է ունեցել 1492 թ. դեսպանությունների փոխադարձ առաքումով։ Այնուհետև, Իրանական պետության, մասնավորապես Շիրվանի խանության և Ռուսաստանի միջև երբեմն-երբեմն դեսպանների միջոցով բանակցություններ են վարվել։ Ընդհանրապես պետք է նշել, որ XVI դ. առաջին կեսին ռուս-իրանական հարաբերությունների մասին տեղեկություններ գրեթե չկան։ XVI դ. 30-ական թվականներից ռուս-իրանական հարաբերությունները կրկին վերսկսվում են։ Այնուհետև, երկու պետությունների միջև տեղի ունեցող բանակցությունները և դեսպանների փոխադարձ առաքումները դառնում են հաճախակի՝ կապված թուրք-իրանական պատերազմների հետ։

Իրանի Սեֆևյան պետության հետ Ռուսաստանի հարաբերության գործում, բացի տնտեսականից (առևտրական հարցեր), կարևոր դեր են խաղացել նաև Թուրքիայի հետ երկու պետությունների հակամարտությունը կամ թշնամական հարաբերությունները, որոնք XVI դ. երկրորդ կեսից հասցրին նրանց մերձեցմանը։ Մերձավոր Արևելքի խնդրում XVI դ. կեսերին կարևոր գործոն էր դարձել Կովկասի և Արևելքի քաղաքական ասպարեզում Ռուսաստանի հան-

---

[1] *Սույն թեմայի ուսումնասիրության համար օգտագործված են հիմնականում ռուսական արխիվային փաստաթղթեր՝ պաշտոնագրեր, դեսպանների զեկուցագրեր, նակազներ և այլն, որոնք հրատարակված են զանազան ժողովածուներում, մասամբ էլ չհրատարակված աղբյուրներ, որոնք պահվում են Մոսկվայի հնագարյան ակտերի կենտրոնական պետական արխիվում* (ЦГАДА)։

գես գալը, որը մեծ անհանգստություն էր առաջացրել Թուրքական և իրանական արքունիքներում։ Սրա հետ առնչություն ուներ նաև Կազանի և Աստրախանի գրավման փաստը Մոսկվայի պետության կողմից։ Թուրքիայի հետ վարած բանակցություններում շահ Թահմազը հմտորեն օգտագործում էր այդ դրությունը սուլթանին նախազգուշացնելու և նրա վրա ներգործելու համար, քանի որ Թուրքիայի դեմ մղած պայքարում նա կարող էր կապվել Ռուսաստանի հետ։ Հետագայում այս ուղղությամբ կոնկրետ քայլեր են արվում։ Պետք է նշել նաև, որ Կովկասին գերիշխելու համար Թուրքիայի և Իրանի միջև մղվող պայքարում ռուսական առևտրական կապիտալի շահերը համընկնում էին Իրանի շահերին։

XVI դ. երկրորդ կեսից, Իվան IV-ի ժամանակվանից Մոսկվայի պետության և Սեֆեյան Իրանի առևտրական և դիվանագիտական կապերը զարգանում են և հաճախակի է դառնում դեսպանների փոխանակությունը։

Ռուսաստանի կողմից Վոլգա-կասպիական առևտրական ճանապարհի յուրացումը փորձեցին օգտագործել նաև անգլիական վաճառականները։ Այդ նպատակով 1557 թ. Մոսկվա ժամանած անգլիական «Մոսկովյան ընկերության» գործակալ Անտոնի Ջենկինսոնը Իվան IV-ի կողմից ուղարկվեց Իրան (1561—1563 թթ.) առևտրական կապեր հաստատելու հանձնարարությամբ։ Բայց շահ Թահմազին արված նրա առաջարկը՝ Անգլիայի և Ռուսաստանի հետ Իրանի համար ձեռնտու մշտական առևտրական հարաբերություններ հաստատելու և առևտրական պայմանագիր կնքելու վերաբերյալ, շահը մերժեց՝ վախենալով Թուրքական սուլթանի դժգոհությունից[2]։

XVI դ. 80-ական թվականների վերջերին Ռուսաստանի և Իրանի հարաբերություններն ավելի բարելավվեցին և Թուրքիայի դեմ միատեղ պայքարի շուրջը տեղի ունեցող բանակցություններն ավելի կոնկրետ բնույթ ստացան։ Մոտավորապես այս ժամանակվանից էլ երկու պետությունների միջև սկսվում են կանոնավոր դիվանագիտական հարաբերություններ։ Այս կապակցությամբ պետք է նշել, որ Ռուսաստանի հետ Իրանի հաստատած կապերը նպաստեցին Շահ-Աբասի դիրքերի ուժեղացմանը և նրա արտաքին քաղաքականության հաջողություններին։ Ռուս-իրանական դաշինքի ուղղությամբ կատարվող քայլերի որոշ հաջողությանը նպաստեց նաև եվրոպական մի քանի պետությունների մասնակցությամբ հակաթուրքական կոալիցիայի ստեղծումը, որի շնորհիվ Մոսկվայի պետությունը հույս ուներ լուծելու, բացի այլ պրոբլեմներից, նաև կասպիական պրոբլեմը և Կովկասի հարցը։

Ռուս-իրանական բանակցություններում երկու միապետներն էլ կոնկրետ խոստումներ էին տալիս՝ միմյանց օգնելու և Հյուսիսային Կովկասում Թուրքերի դեմ դուրս գալու վերաբերյալ[3]։

Այդ նույն շրջանում Շահ-Աբասը բացի դրանից, խոստանում էր ցարին նաև Թուրքիայի դեմ նրա ցույց տված օգնության փոխարեն Ռուսաստանին զիջել Թուրքիայի կողմից օկուպացված Դերբենդ և Բաքու քաղաքները իրենց առափնյա տերիտորիաներով, որոնք կգրավեին ռուսական կամ իր զորքերը[4]։

---

2 Տե՛ս «Английские путешественники в Моск. государстве в XVI в., пер. с английского Ю. В. Готье», М., 1937, էջ 231.

3 Տե՛ս «Памятники дипломатических и торговых сношений Московской Руси с Персией», т. I, 1890, էջ 61:

4 Նույն տեղում, էջ 88, 96 և 129.

Բանակցությունների ժամանակ ռուսական դեսպանը շահին հայտնում է, որ ցարը հրամայել է Աստրախանի և Թերեքի վոյեվոդներին՝ թույլ չտալ սուլթանի և Ղրիմի խանի զորքերին անցնել Թերեքը և այնտեղից հարձակվել Իրանի վրա[5]։ Իհարկե, Հյուսիսային Կովկասում Մոսկվայի պետության միջոցառումների գլխավոր նպատակը Իրանին օգնելը չէր, այլ իր սեփական շահերի պաշտպանությունը։

Սակայն Շահ-Աբասի վերոհիշյալ առաջարկները պրակտիկ նշանակություն չունեցան։ Ինչպես Մոսկվայի պետությունը, այնպես էլ Իրանը, չնայած Թուրքիայի հանդեպ ունեցած իրենց թշնամական դիրքին, իրականում յուրաքանչյուրն իր սեփական քաղաքականությունն էր վարում՝ ելնելով իր շահերից։

Թուրքական սուլթանը իր հերթին աշխատում էր առերես բարյացակամ վերաբերմունք ցույց տալ Մոսկվայի պետությանը։ Նա ցարին առաջարկում է բարեկամություն և դաշինք՝ Իրանի հետ նրա հարաբերությունը խզելու պայմանով։ Որոշ ժամանակ անց սուլթանը տեղեկանալով իր դեմ պատրաստվող դաշինքի մասին և ցանկանալով խափանել այն, կրկին դիմում է ցարին այս անգամ առաջարկելով միատեղ գործել Իրանի դեմ, խոստանալով նրան տալ շահից գրաված քաղաքները[6]։

Սակայն Ֆեոդոր Իվանովիչ ցարը սուլթանի երկու առաջարկը քաղաքավարությամբ մերժելով, շարունակում է բարեկամական հարաբերությունը Իրանի հետ։

XVII դ. սկզբներին ռուս-իրանական հարաբերությունները հիմնականում մնում էին բարեկամական, եթե հաշվի չառնենք այն, որ XVI դ. 90-ական թվականների սկզբի թուրք-իրանական հաշտության պատճառով կարճ ժամանակով երկու պետությունների միջև տեղի ունեցավ բարեկամական հարաբերության որոշ սառեցում կամ խախտում[7]։

Այդ հաշտությունը ռուսների կողմից գնահատվեց որպես դավաճանություն և ցարը դեսպան չուղարկեց Իրան[8]։

Բացի դրանից, հաշտությունից հետո ցարական արքունիքը այլևս շահից չէր թաքցնում Թուրքիայի հետ ունեցած իր հարաբերությունը։ Ուշագրավ է նաև այն, որ 1592 թ. ցարը դեսպանորդ Նաշչոկինի միջոցով հայտնում է սուլթանին, որ ինքը մերժել է պարսկական շահի խնդիրը՝ Թուրքիայի դեմ Ռուսաստանից օգնություն ստանալու վերաբերյալ[9]։

Բայց շուտով Մոսկվայի պետության և Իրանի հարաբերությունները բարելավվեցին։ Ռուսական կառավարությունը փորձեց կրկին ամրացնել իր կապերը Սեֆևյան պետության հետ և այլ կերպ էլ չէր կարող լինել։ Բանն այն է, որ Ադրբեջանի և Դաղստանի կասպիական ափերի՝ Թուրքիայի ձեռքում գտնվելը (պատերազմում Իրանից զավթելու հետևանքով) միանգամայն ձեռնտու չէր ոչ միայն Իրանի, այլև Ռուսաստանի համար, մանավանդ որ դրա

---

5 Տե՛ս «Памятники дипломатич. и торговых сношений» и т. д., том I, էջ 97.

6 Белокуров С., Сношения России с Кавказом, вып. I, 1578—1613, СПБ, 1889 (փաստաթղթերի ժողովածու), էջ 42։

7 Տե՛ս «Сношения России с Персией о Кавказе». Чтение в императорском обществе истории и древностей, 1888, кн. III, էջ 67:

8 Տե՛ս «Памятники дипломатич. и торг. сношений» и т. д., т. I, էջ 168—169:

9 ЦГАДА. «Турецкие дела», ф. 89, стр. I.

հետևանքով Վոլգա-կասպիական ճանապարհը գտնվում էր օսմանցիների հսկողության տակ։ Ուստի պարզ է, որ ընդհանուր առևտրական և արտաքին-քաղաքական շահերը մղում էին երկու պետությունների մերձեցմանը։

1593 թ. մայիսին, որոշ դադարից հետո, Ֆեոդոր Իվանովիչ ցարը, ի պատասխան շահի դեսպանության կողմից բարեկամության վերաբերյալ արած առաջարկներին, իր դեսպանին հատուկ նամակով և բացատրականով ուղարկում է Շահ-Աբասի մոտ և պատրաստակամություն հայտնում վերականգնելու երկու պետությունների բարեկամական հարաբերությունները։ Այնուհետև, 90-ական թվականների ընթացքում նման դեսպանությունների առաքումները և բանակցությունները կրկնվեցին մի քանի անգամ, որոնց ժամանակ երկու կողմերն էլ հավաստիացնում էին միմյանց իրենց բարեկամության, փոխադարձ օգնության և ընդհանուր թշնամու դեմ միատեղ դուրս գալու, միմյանց սահմանները չխախտելու, երկու երկրների ազատ առևտրի իրավունքի և այլնի մասին[10]։

1597 թ. Իրան ուղարկված ռուսական դեսպանին հանձնարարվում է հավաստիացնել շահին, որ ցարը նրան ռազմական օգնություն ցույց կտա՝ Թուրքիայի, նրա վասալների և Բուխարայի դեմ, եթե դրա կարիքը լինի և եթե շահը իրենից օգնություն խնդրի։ Գրեթե նույնպիսի հավաստիացում տրվեց նաև 1599 թ. Բորիս Գոդունովի կողմից[11]։

Շահ-Աբասի կառավարությունը ռուսական կառավարությանը առաջարկեց միատեղ ռազմական գործողություններ սկսել Թուրքիայի դեմ, որպեսզի նրանից ետ խլեն Կասպից ծովի կովկասյան ափերը և մնտաքսով հարուստ Շիրվանը, որոնք նա զավթել էր վերջին պատերազմի ժամանակ։ Իրանին ցույց տրվող օգնության դիմաց Շահ-Աբասի դեսպանը խոստանում էր Ռուսաստանին զիջել Դերբենդը, Բաքուն և Շամախին։

Թե որքան անկեղծ ու իրական էին այս խոստումները և հավաստիացումները, դժվար է ասել, մանավանդ, որ ինչպես գիտենք, Մոսկվայի կառավարությունը այդ ժամանակ մտադրություն չուներ պատերազմի մեջ մտնել Թուրքիայի հետ։ Բայց մյուս կողմից էլ հայտնի է, որ նա ձգտում էր իր բարեկամական հարաբերությունները պահպանել Իրանի հետ։ Ֆեոդոր Իվանովիչի կառավարությունը ձգտում էր հասնել շահի այդ զիջման ձևական հաստատմանը։ Իրանի դեսպանը, որ երկար ժամանակ խուսափում էր դրանից և սահմանափակվում բանավոր խոստումներով, վերջապես շահից լիազորություն ստացավ գրավոր պարտավորություն տալու։ Այդ խոստումները, սակայն, կոնկրետ հետևանքներ չունեցան։

Թուլացած Լիվոնյան երկարատև պատերազմից և նոր պատերազմ բորբոքվելու վտանգի տակ գտնվելով, Ռուսաստանը չէր կարող իսկական պատերազմ սկսել Օսմանյան կայսրության դեմ և ստիպված էր սահմանափակվել Դաղստանի սահմանների շրջանում տեղական նշանակություն ունեցող ռազմական գործողություններով։

Պետք է նաև նշել, որ Իրանի հետ պայմանագիր կնքելու բանակցությունների հետագա ընթացքին խանգարեց ռուսական դեսպան Վասիլի Տուֆյակինի

---

10 Տե՛ս «Памятники дипл. и торг. сношений» и т. д., т. I, էջ 224—227, т. II, էջ 136—143։

11 Նույն տեղում, հ. 1-ին, էջ 352—353, հ. 2-րդ, էջ 30։

մահը ևս, եթե նկատի չունենանք, որ քիչ հավանական է, թե շահը անվերապահորեն կհամաձայնվեր Մոսկվայի առաջադրած պայմաններին և առհասարակ գրավոր պայմանագիր կկնքեր։ Բացի այդ, հիշյալ քաղաքները Ռուսաստանին զիջելու վերաբերյալ շահի հավաստիացումներից անկախ, Մոսկվան իրավացի կերպով կասկածում էր, թե կկատարվեն այդ խոստումները. շահին ոչինչ չէր խանգարում խոստանալու այն քաղաքները, որոնք գտնվում էին Թուրքիայի ձեռքում։ Ինչպես ցույց տվեցին հետագա անցքերը, շահն այդ քաղաքները խոստանում էր Ռուսաստանին, քանի դեռ ինքը չէր տիրում դրանց։ Ճիշտ է, Մոսկվա ուղարկվեց գործողությունների բավական կոնկրետ ծրագիր, որը ենթադրում էր երկու պետությունների միաժամանակյա ելույթը, որը հաղթանակի դեպքում նրանց միջև սահմանակցություն կառաջացներ։ Սակայն այդ ծրագիրը չիրագործվեց, թեև Բորիս Գոդունովը, որն այդ դաշինքի ջերմ կողմնակիցն էր, փորձում էր իրականացնել այն։ Այնպես որ Ռուսաստանի և Իրանի միջև եղած բարեկամական հարաբերությունները չհասցրին նրանց միջև ռազմա-քաղաքական կոնկրետ դաշինքի կնքման։

* * *

1603—1627 թթ. թուրք-իրանական պատերազմների ժամանակ պահպանվում էին Իրանի հարաբերությունները եվրոպական մի շարք պետությունների և Ռուսաստանի հետ։ Այդ հարաբերություններն առանձնապես աշխույժ էին Գերմանական կայսրության և Ռուսաստանի հետ։ Երկու պետությունների միջև բանակցությունները, դեսպանների փոխադարձ առաքումներով, տեղի էին ունենում գրեթե նույն հարցերի շուրջը, ինչ-որ դրանից առաջ, ներառյալ նաև առևտրի հարցերը։ Միայն թե այս անգամ այդ բանակցությունների մեջ բավական տեղ էր գրավում նաև Վրաստանի հարցը[12]։ Շահ-Աբասը, հաշվի չառնելով վրաց թագավորների և Ռուսաստանի բարեկամական հարաբերությունները և օգտվելով Մոսկվայի պետության ծանր դրությունից, 1606—1607 թթ. Կախեթիայի թագավոր Ալեքսանդրին և նրա որդուն սպանել տվեց և երկիրը նվաճեց։ Դրանով Ռուսաստանի նախկին դաշնակիցը նրան դուրս մղեց իր նվաճած դիրքերից։ Այս մասին Մոսկվայի կառավարությունը (Վասիլի Շույսկու ժամանակ) բողոք է հայտնում շահին, որը հակառակ իրենց բարեկամության, նման ոչ բարեկամական քայլ էր կատարել իր (ցարի) հովանավորության տակ եղած պետության (Վրաստանի) նկատմամբ, և պահանջում է, որպեսզի շահը այդ երկիրը չնվաճի և նրան նեղություն չտա, սպառնալով հակառակ դեպքում վերջ տալ իրենց բարեկամությանը և Թուրքիայի դեմ եղած իրենց միությանը[13]։ Այս բողոքը, սակայն, Իրան չհասավ. Մոսկվայի սուրհանդակները ճանապարհին սպանվեցին։

Այս դեպքերից մոտ երկու-երեք տարի անց Շահ-Աբասը Մոսկվայի կրկին հիշեցնելով իրենց բարեկամության մասին, նրան հրավիրում է մասնակցելու Թուրքիայի դեմ մղվող պատերազմին և խնդրում է նաև կայսեր մոտ ուղևորվող իր դեսպանին Թուրքիայի դեմ միատեղ գործելու բանակցություններ վարելու համար ուղարկել Ավստրիա[14]։ Բայց շուտով Շահ-Աբասը Մոսկ-

---

[12] Տե՛ս «Чтения в импер. обществе истории и древностей», 1888, кн. III, էջ 571—572։

[13] Նույն տեղում, էջ 573—576։

[14] Տե՛ս «Памятники...» и т. д., т. II, էջ 253։

վայի նկատմամբ իր անբարյացկամ վարքագծի մի այլ փաստով կրկին խիստ դժգոհություն առաջացրեց իր դեմ և երկու պետությունների հարաբերությունները որոշ չափով վատացան։ Նա փորձեց հովանավորել Մոսկվայի կենտրոնական իշխանության դեմ ապստամբած և այդ ժամանակ Աստրախանում գտնվող Զարուցկուն, պատրաստվելով նրան օգնել զինված ջոկատով, դրամով և պարենով՝ նպատակ ունենալով ի վերջո Աստրախանը միացնել Իրանին[15]։

Մոսկվայի կառավարությունը դեռ 1613 թ. իր դեսպանի միջոցով զգուշացնում է շահին ետ կանգնել նման մտադրությունից և չօգնել Զարուցկուն[16]։

Բայց Շահ-Աբասին չհաջողվեց իր այդ մտադրությունն իրագործել։ Ռուսաստանում իրադրությունը փոխվեց, իսկ Զարուցկու ապստամբությունն էլ ճնշվեց։ Այդ մասին Մոսկվայի կառավարությունը իրազեկ դարձրեց Իրանի շահին[17], որը հարկադրված եղավ հրաժարվել իր մտադրությունից։

Դրանից հետո (մոտ 1614 թ.) Մոսկվայի պետության և Իրանի միջև վերականգնվում են բարեկամական հարաբերությունները (իհարկե, ոչ լիովին անկեղծ), որոնք արտահայտվում են Միխայիլ Ռոմանովի և Շահ-Աբասի կողմից այդ ոգով միմյանց միջև դեսպանների և պաշտոնագրերի փոխադարձ առաքումով և նույնիսկ դաշինք կնքելու հավաստիացումով[18]։

Ի պատասխան շահի դեսպանության և նրա բարեկամական առաջարկին Մոսկվայի կառավարությունը հատուկ դեսպանություն է ուղարկում Իրան (մոտ 1614 թ.)՝ Միխայիլ Ռոմանովի գահակալության մասին շահին հայտնելու և Իրանի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու համար, որոնք խանգարվել էին «խառնակ ժամանակների» տարիներին[19]։

Սակայն այդ դրությունը շատ կարճ է տևում։ Շուտով Շահ-Աբասը կրկին նվաճելով ու ամայացնելով Կախեթիան, ցարի (Միխայիլ Ռոմանովի) խիստ դժգոհությունն է առաջ բերում, որը պահանջում է շահից ետ տանել իր զորքը Վրաստանից և հանգիստ թողնել նրա թագավորներին, որպես Ռուսաստանին ենթակաների, մանավանդ որ Կախեթիայի թագավոր Թեյմուրազը այս առիթով դիմել էր ցարի օգնությանը[20]։ Շահը մտադրություն ուներ հարձակվելու նաև կաբարդիների և Կումիցկու իշխանությունների վրա՝ դրանք նվաճելու համար։ Ցարը շահին զգուշացնում է նաև այդ կապակցությամբ և միաժամանակ կարգադրում Աստրախանի և Թերեքի վոյևոդներին՝ օգնելու այդ իշխանություններին, եթե շահը այդ քայլին դիմի[21]։ Ավելորդ չէր լինի նաև

---

[15] Տե՛ս «Памятники...» и т. д., т. II, էջ 348։

[16] Տե՛ս «Чтения в императорском общ. и т. д.», էջ 576—577։

[17] Տե՛ս «Памятники...» и т. д., т. II, էջ 377—380։

[18] Տե՛ս Նույն տեղում, էջ 291—295, 351—361։

[19] Տե՛ս Նույն տեղում, т. III, էջ 136—137։

[20] Տե՛ս «Дело о присылке Шахом Аббасом ризы господней Царю Михаилу Феодоровичу в 1625 г.», էջ IV—V.

[21] Տե՛ս «Дело о присылке Шахом Аббасом» и т. д., էջ 125—126։ Հետաքրքիր է ավելացնել, որ ցարի դեսպանի այդ պահանջին և զգուշացմանը Վրաստանի վերաբերյալ, շահը պատասխանում է, որ Թեյմուրազի և նրա երկրի նկատմամբ այդպես է վարվել, որովհետև նա իրեն խաբելով և թշնամաբար վարվելով, անցել է սուլթանի կողմը («Памятники...», т. III, էջ 34)։

նշել, որ այս հարցերի վերաբերյալ շահին ուղարկած Մոսկվայի պաշտոնագրում նշվում էր նաև այն մասին, որ Հյուսիսային Կովկասում Թուրքերի վրա կազակների հարձակումների շնորհիվ Իրանի դրությունը Թուրքիայի դեմ մղած պայքարում թեթևանում է, և դա նույնպես որոշ օգնություն է Իրանին։

Մոսկվայի այս միջամտությունը և պահանջը, ըստ երևույթին, ներգործում է։ Ընդառաջելով ցարին, ինչպես նաև այլ նկատառումներով, շահը հաշտվում է Թեյմուրազի հետ և սա իր մորն ու երկու որդիներին պատանդ է տալիս Շահ-Աբասին՝ իբրև սուլթանի կողմը չանցնելու երաշխիք։ Բայց, հակառակ դրան, շուտով Թեյմուրազը որոշ պատճառներով[22] անցնում է սուլթանի կողմը և Շահ-Աբասը համապատասխան միջոցների է դիմում։

Մոսկվայի պետության և Իրանի հարաբերությունները դրանից հետո բավական լավացան։ Իրան ուղարկված Մոսկվայի դեսպաններին Շահ-Աբասը հայտարարում է, թե ցանկանում է ցար Միխայիլի հետ ամուր բարեկամություն հաստատել և նրան օգնել զորքով ու փողով, եթե ցարը նույնպես իրեն նման օգնություն ցույց կտա։ Եվ իրոք, երբ ցարը շահից դրամ է խնդրում Լիտվայի և Լեհաստանի դեմ պատերազմելու համար, Շահ-Աբասը 7000 ռուբլի արծաթ է ուղարկում նրան[23]։

1618 թ. Մոսկվայից նոր դեսպանություն է մեկնում Իրան՝ իշխան Բորյատինսկու գլխավորությամբ, որը պետք է մի կողմից՝ Շահ-Աբասին շնորհակալություն հայտներ դրամական օգնության համար, մյուս կողմից՝ նոր դրամական օգնություն խնդրեր՝ Լեհաստանի դեմ նոր պատերազմի դեպքում ռազմական նպատակով ծախսելու համար։ Այս անգամ, սակայն, ռուսական դեսպանությունը, թեև արտաքուստ սիրալիր ընդունելությանը, չհասավ իր նպատակին[24]։

XVII դ. 20-ական թվականների սկզբից ռուս-իրանական հարաբերությունները կրկին լավանում են։ Այդ են ապացուցում ցարի և շահի միմյանց հղած փոխադարձ պաշտոնագրերը բարեկամության և այլ հարցերի մասին։

1623—1624 թթ. ցարի և շահի միջև կրկին բանակցություններ են տեղի ունենում, որի ժամանակ շահը հայտնում էր, որ եթե վրացական երկիրը ցարին հարկավոր է, ապա ինքն այն չի պահի և Թեյմուրազն էլ գուցե Թուրքերից հրաժարվի (նա վերադառնա)։ Դեռ ավելին։ Շահ-Աբասը, իբրև դիվանագի-

---

22 Տե՛ս «Памятники», т. III, էջ 34.

23 Տե՛ս Соловьев С. М., История России и т. д., т. IX, изд. II, էջ 205—206։

24 «Памятники дипломатическ. и торг. сношений» и т. д., т. III: «Եթե ձեր արքայի խնդիրքն ու ցանկությունը կկատարեմ և գանձարանից նրան դրամական փոխառություն կտամ,— հայտարարեց շահը ցարի դեսպանությանը,—բայց ես վրդովված եմ ձեր արքայի դեմ այն բանի համար, որ երբ իմ դեսպանները նրա մոտ էին, ապա Մոսկվայում, Կազանում և Աստրախանում նրանց անասունների նման փակել էին իշխաններում..., իսկ դարպասների մոտ ստրելեցներ էին կանգնեցրել։ Ես ես կհրամայեմ ձեզ նույնպիսի վիճակում պահել և այնպիսի խստությամբ, որ ձեր մոտով թռչուն չթռչի...։ Բացի այդ, ձեր արքան իմ նկատմամբ նաև նրանում է անբարյացակամություն ցույց տվել, որ նրա վոյևոդները Աստրախանում, Կազանում և այլ քաղաքներում իմ վաճառականներին վնասներ են հասցնում, հրանցից առաջվա համեմատությամբ երկու և երեք անգամ շատ մաքսեր են վերցնում... և արգելում են ինձ համար ապրանքներ գնել...։ Իսկ եթե իմ երկրում իմ պրիկազի ծառայողները ձեր վաճառականին վնաս հասցնեն, ապա ես կհրամայեմ իսկույն և եթ նրանց որովայնը պատռել» (նույն տեղում)։

տական ժեստ, իհարկե, ոչ անկեղծությամբ, հայտնում է ցարին, որ ինքը ոչ միայն Թեյմուրազի թագավորությունը չի պահի, այլև նույնիսկ իր թագավորությունը չի խնայի և իր քաղաքները՝ Դերբենդը, Շիրվանը, Շամախին և Բաքուն պատրաստ է նրան զիջելու։ Այնուհետև, շահը խնդրում է ցարին համոզելու Թեյմուրազին, որպեսզի նա հրաժարվի սուլթանից, որի համար ինքը խոստանում է նրան (այսինքն Թեյմուրազին), նրա հարազատներին և նրա թագավորությունը զիջելու «իր եղբորը» (ցարին)։ Որպես բարեկամական ակտ Շահ-Աբասը բաց է թողնում և Ռուսաստան ուղարկում թուրքերի, ուզբեկների և ուրիշների կողմից վերցված ռուս գերիներին[25]։

Տեղեկություն կա նաև 1623 թ. երկու միապետների միջև եղած գրության վերաբերյալ, որի ժամանակ Շահ-Աբասը, ի պատասխան Միխայիլ Ֆեոդորովիչի պաշտոնագրի, նրան ուղարկած իր պաշտոնագրում գովասանական խոսքերով խիստ մեծարելով նրան, խոսում է իրենց միջև բարեկամության և սիրո, ինչպես նաև երկու երկրների միջև փոխադարձ առևտրի ու նրա պայմանների մասին[26]։

XVII դ. 20-ական թվականների երկրորդ կեսին ռուս-իրանական հարաբերություններում առանձին փոփոխություններ և ուշագրավ դեպքեր տեղի չեն ունեցել։ Այս շրջանում ևս հարաբերությունները հիմնականում բարիդրացիական էին և երկու պետությունները միմյանց հետ շարունակում էին առևտուր անել, չնայած առկա որոշ փոխադարձ անվստահության։ 1627 թ. թուրք-իրանական հաշտություն, ինչպես հայտնի է, Մոսկվայի կառավարության մոտ որոշ դժգոհություն առաջ բերեց, քանի որ նա իրավունք ուներ այն իր համար վնասակար համարելու։ Մյուս կողմից, Ռուսաստանի առաջխաղացումը Հյուսիսային Կովկաս և Կասպից ծովի շրջանը անհանգստություն է առաջ բերում շահի արքունիքում. վտանգ կար, որ նրա հյուսիսային հարևանը կարող է տիրել Կասպից ծովի շրջանը[27]։

Չնայած դրան, երկու պետություններն էլ աշխատում էին իրենց հարաբերությունները չվատացնել և շարունակում էին ավելի ամրացնել իրենց բարեկամական հարաբերությունները։ Այս է հաստատում այն տեղեկությունը, ըստ որի 1629 թ. կրկին Ռուսաստան է ժամանում Իրանի դեսպանը՝ երկու պետությունների միջև բարեկամական հարաբերություն հաստատելու առաջարկով[28]։

Դժբախտաբար մեզ հայտնի աղբյուրներում (գլխավորապես ռուսական) XVII դ. 30-ական թվականներին ռուս-իրանական հարաբերությունների վերաբերյալ չկան ուրիշ տեղեկություններ կամ հաղորդումներ, որոնց միջոցով հնարավոր լիներ ավելի հանդամանորեն պարզաբանել իրադրությունը։ Ըստ երևույթին դա բացատրվում է նրանով, որ այդ ժամանակ Մոսկվայի պետությունը գտնվելով միջազգային բարդ և դժվարին պայմաններում, չէր կարող բավարար չափով զբաղվել Իրանի հետ իր հարաբերության հարցերով։ Թերևս

25 Տե՛ս «Дело о присылке» и т. д., էջ 38—41:

26 Տե՛ս ЦГАДА, Персидские дела, ф. 77, л. 148—153

27 Տե՛ս Зевакин Е., План захвата Моск. гос-ом Прикаспийск. областей: «К истории Прикаспийск. вопроса», Тифл., 1934, էջ 8:

28 Տե՛ս ЦГАДА, Персидские дела, ф. 77, էջ 144—146։

այդ պատճառով են նշված ժամանակաշրջանում և դրանից հետո մի որոշ ժամանակ ռուս-իրանական հարաբերությունները թուլացել։ Միայն հայտնի է, որ տվյալ ժամանակաշրջանում ևս այդ հարաբերությունները չհասցրին Ռուսաստանի և Իրանի միջև պաշտոնական ռազմա-քաղաքական դաշինքի կընքման։

Հետագայում, 1639 թ. թուրք-իրանական հաշտությունից հետո և հատկապես XVII դ. 50-ական թվականներից սկսած ռուս-իրանական հարաբերությունները կրկին աշխուժանում են։ Մոսկվայի կառավարությունը ձգտելով թուլացնել Իրանի ազդեցությունը Վրաստանում և ուժեղացնել իր ազդեցությունը Կախեթիայի վրացական թագավորության վրա, ամրացնել նրա կապերը իր հետ, բարոյական և նյութական որոշ օգնություն է ցույց տալիս Կախեթիայի թագավոր Թեյմուրազին։ Իբրև պատասխան Կախեթիայի՝ Մոսկվա ուղարկած դեսպանության (1640 թ.) Մոսկվայի կառավարությունը իր կողմից դեսպանություն է առաքում Վրաստան[29]։

1653 թ. ցարը դեսպանություն է ուղարկում շահի կառավարության մոտ։ Տեղի ունեցող բանակցություններն ընթանում էին հիմնականում առևտրի հարցերի շուրջը, որոնք հետաքրքրում էին ոչ միայն մոսկովյան, այլև արևմտաևրոպական վաճառականությունը։ Երկու պետությունների միջև բավական աշխուժանում են առևտրական հարաբերությունները։ Մոսկվայի կառավարությունը ձգտում էր ավելի ընդարձակել մետաքսի առևտուրը Իրանի հետ։

Իրանական վաճառականները առևտրական գործարքների համար շարունակ Ռուսաստան էին գալիս։ Միաժամանակ ռուս վաճառականները անմիջական հարաբերությունների մեջ են մտնում Իրանում հայ վաճառականների հետ և 1667 թ. պայմանագիր կնքում Նոր Ջուղայի հայ առևտրական ընկերության հետ։

Այսպիսով, այս բոլորից երևում է, որ XVII դ. առաջին կեսին ռուս-իրանական հարաբերությունները նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ ավելի աշխուժանում են մի կողմից՝ ռազմա-քաղաքական նկատառումներով, գլխավորապես կապված թուրք-իրանական պատերազմների հետ, մյուս կողմից՝ տնտեսական նկատառումներով, կապված Ռուսաստանի և Իրանի միջև առևտրական հարաբերությունների որոշ աշխուժացման հետ։ Բայց և այնպես նշված շրջանում ռուս-իրանական հարաբերությունները, վերևում նշված պատճառներով, չհասցրին այդ երկու երկրների միջև պաշտոնական ռազմա-քաղաքական կոնկրետ դաշինքի կնքման։

У. Х. Наджарян

ИЗ РУССКО-ИРАНСКИХ ОТНОШЕНИИ ПЕРВОЙ ПОЛОВИНЫ XVII ВЕКА

Резюме

Вопрос русско-иранских отношений в I половине XVII века почти не изучен до сих пор, хотя он представляет определенный научный интерес.

29 Տե՛ս Полиевктов М. А., Европейские путешественники XIII—XVIII вв. по Кавказу, Тифлис, 1935, էջ 51։

В указанном периоде времени в русско-иранских политико-дипломатических отношениях, которые имели место преимущественно в связи с турецко-иранскими войнами и в условиях этих войн, кроме военно-политической роли немаловажную роль играл также экономический фактор, т. е. торговые отношения.

Еще начиная с половины XVI века между Россией и Ираном происходили неоднократно переговоры как вокруг торговых вопросов, так и, в особенности, по вопросу заключения между ними военно-политического союза и совместного выступления против Турции.

Эти переговоры еще более оживились в I половине XVII века и привели к сближению обоих государств, хотя в их отношениях бывали также некоторые ухудшения и охлаждения.

Несмотря на враждебную позицию этих государств в отношении Турции и связанного с этим совпадения их интересов, тем не менее, в силу внутренних и внешних обстоятельств, переговоры, происходившие между Московским государством и Сефевидским Ираном, не привели к заключению военно-политического официального союза между ними.